ՊԲ-9622

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

* * *

Հունվարի 21-ին՝ կիրակի.—Բ կիրակի զկնի ծննդեան.

Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ տ. Մկրտիչ քհն. Մկրտչյանը, քարոզեց հոգ. տ. Շնորհք վրդ. Գասպարյանը՝ «Հոգին է կենդանարար, մարմին ինչ ոչ օգնէ» (Հովհ. Զ 64) բնաբանով։

* * *

Հունվարի 28-ին՝ կիրակի.—Գ կիրակի զկնի ծննդեան.

Մայր տաճարում պատարագեց և քարոզեց հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը՝ «Ես եմ հացն կենդանի» (Հովհ. Զ 51) բնաբանով։

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգիստ՝ նոր հանգուցյալ գեր. տ. Վարդան եպս. Տեր-Սահակյանի հիշատակին։

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

* * *

Փետրվարի 2-ին՝ ուրբաթ.—*Երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո, գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, ուր քննության առնվեցին և հաստատվեցին 1968 թվականի մարտի 28-ից ապրիլի 5-ը Պրագայում քրիստոնեական եկեղեցիների խաղաղության համագումարին և հուլիսի 4-ից 20-ը Ուփսալայում եկեղեցիների համաշխարհային խորհրդի 4-րդ համաժողովին հայ եկեղեցու մասնակցության հարցերը։*

Վեհափառ Հայրապետի առաջարկով Գերագույն հոգևոր խորհուրդը արձանագրեց մասնավոր եկեղեցական պատվիրակությունների ուղարկումը երկու համաժողովներին։

* * *

Փետրվարի 4-ին՝ կիրակի.—Դ կիրակի զկնի ծննդեան.

Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ տ. Հովհաննես քհն. Մարուքյանը, քարոզեց հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պողապալյանը՝ «Ես եմ հովիւն քաջ, հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» (Հովհ. Ժ 11) բնաբանով։

* * *

Փետրվարի 7-ին՝ շաբաթ.—*Այսօր Մայր Աթոռ ս. էջմիածին ժամանեց Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի բարեխնամ առաջնորդ գեր. տ. Տիրայր եպս. Մարտիկյանը։ Օդանավակայանում սրբազան հորը դիմավորեցին հոգ. տ. Նարեկ վրդ. Շաքարյանը և շնորհունակ Հովհաննես սրկ. Հակոբյանը։ Մայր տաճարում իր աղոթքը կատարելուց հետո տ. Տիրայր եպիսկոպոսը Վեհարանում ընդունվեց Վեհափառ Հայրապետի կողմից։*

* * *

Փետրվարի 9-ին՝ ուրբաթ.—*Երեկոյան ժամը 6-ին, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության ներքո, գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը։*

Գերագույն հոգևոր խորհրդի նիստին հրավիրված էր նաև ներկա լինելու ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ռումինիայի և Բուլղարիայի թեմերի առաջնորդ գեր. տ. Տիրայր եպս. Մարտիկյանը, որը զեկուցեց 1967 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, Վեհափառ Հայրապետի արտոնությամբ և Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ գեր. տ. Սերովբե արքեպ.

ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՐՔԻՊԵՍԿՈՊՈՍՈՒԹՅՈՒՆ ԱՂԱԹՕՄԻՆ

Մանուկյանի հրավերով, Փարիզ, Լիոն, Մարսել և Լոնդոն իր հովվական այցելությունների և տպավորությունների մասին։

Գերագույն հոգևոր խորհուրդը գոհունակությամբ արձանագրեց գեր. տ. Տիրայր եպս. Մարտիկյանի բանավոր տված զեկուցագիրը։

Նիստի վերջում Վեհափառ Հայրապետը, հանուն ժողովի, իր գոհունակությունը հայտնեց գեր. տ. Տիրայր եպիսկոպոսին՝ մաղթելով նրան լավագույն հաջողություններ իր պաշտոնավարության մեջ։

* * *

Փետրվարի 11-ին՝ կիրակի.—Ե կիրակի զկնի ծննդեան.

Մայր տաճարում պատարագեց հոգ. տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը և քարոզեց «Ամենասուրբ Երրորդութեանն ընտրեալ ծառայ և հաւատարիմ, յաղթող սպառազէն և քաջ նահատակ, երագահաս սուրբդ Սարգիս շնորհաց օթևան» (Շար.) բնաբանով։

Այսօր առավոտյան Մայր Աթոռից և Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, իր պաշտոնատեղին մեկնեց հոգ. տ. Շնորհք վրդ. Գասպարյանը, որը շուրջ երկու ամիս ուխտավորաբար գտնվում էր Մայր Աթոռում։

* * *

Փետրվարի 13-ին՝ երեքշաբթի—*Երեկոյան Մայր տաճարում տեղի ունեցավ Տյառընդառաջի նախատոնակը՝ հանդիսադրությամբ Վեհափառ Հայրապետի։ Եկեղեցական երգեցողությունները կատարեցին հոգևոր ճեմարանի սաները։*

Ժամերգությանը ներկա էին բազում հավատացյալներ և հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը։

Ժամը 7-ին Վեհարանի բակում, ի ներկայության Մայր Աթոռի միաբանության, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողության, Վեհափառ Հայրապետը վառեց Տյառընդառաջի ավանդական խարույկը, որի շուրջ ուսանողները երգեցին և ուրախացան։

Ժամը 8-ին Վեհափառ Հայրապետը բարեհաճեց ընթրիքին իրեն սեղանակից դարձնել Մայր Աթոռի միաբանությանը և հոգևոր ճեմարանի դասախոսական կազմին։

* * *

Փետրվարի 14-ին՝ չորեքշաբթի.—Տեառընդառաջ.

Մայր տաճարում պատարագեց արժանապատիվ տ. Նշան քհն. Բեյլերյանը։